



«ԹԱՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԸ ՅՂՈՅՔ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» ԳՈՒԿ. ԴԲ. 16.

ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1892

ԹԻԻ 12



ՔՈԼՈՄԳՈՍ ԻՆՉ ՊԱՏԱՄԻԱՆ ՏՈՒԱՒ
ՀԱՐՑԱՆ ՄԸ

Պէտք չէ որ անցնի Ամերիկայի գիւտին 400 բռ տարեդարձն առանց դնելու Քոլոմպոսի կեանքին վերաբերեալ պատկեր մը: Նախորդ երեսին վրայ գտնուած պատկերը կը ներկայացունէ հացկերոյթ մը զոր ի պատիւ Քոլոմպոսի տուաւ Կարտինալ Մենտոյա, յոյժ հռչակաւոր անձ մը, երբ նա յաջող ճանապարհորդութիւն մը կատարած

յաջողեցաւ: Այն ատեն Քոլոմպոս առաւ հաւկիթը, և անոր քիթը մեղմով զարնելով սեղանին, այնպէս որ քիչ մը ճնշուէր, ուղիղ կանգնեցուց զայն: Բոլոր հրաւիրեալք ծիծաղեցան և հասկցան անոր սյո պատասխանին նշանակութիւնը: Դիւրին էր Սպանիացոց գտնել Ամերիկան, ճամբան իրենց ցուցուելէն ետքը, ճիշդ ինչպէս կրնային հաւկիթը կանգնեցունել քիչ մը ճնշելով քիթը՝ Քոլոմպոսի այդպէս ընելէն ետքը:

կը կոչուի Բոժոժաւոր օձ, վասն զի ձայն մը կը հանէ ազիտի իւր զոհին վրայ յարձակելէ առաջ: Եթէ այս օձերէն մին խոյթ էր այժեամբ մը, հաւանականապէս կը մեռնէր սա: Բայց այժեամբերն առիթ չեն տար անոր: Երբ կը դրանեն բոժոժաւոր օձ մը, կը վազվազեն անոր շուրջը բոլորով մը ձեւացունելով, և օձը շուարելով իւր վրայ յարձակողաց բազումներէն և անոնց արագ շարժումէն, չգիտեր թէ ո՞ր կողմ



ԱՅՆՆԱՄԱՆԵՐԸ ԿԸ ՍՊԱՆՆԵՆ ԲՈՅՈՒՄԱՆՈՐ ՕՁ ՄԸ

էր Ամերիկան գտնելով: Քոլոմպոս պատուաւոր սեղ մը կը նստէր կարգինային աջ կողմը. բայց ներկայ գըտնուողներէն ոմանք կը նախանձէին տնոր՝ իւր ստացած համբաւին համար, մանաւանդ անոր համար որ Քոլոմպոս օտարական էր: Անոնցմէ մին հարցուց Քոլոմպոսի թէ չէր կարծեր որ կային շատ Լ'պանիացիք, որ կրնային գտնել նոր Աշխարհը եթէ ինք գտած չըլլար: Քոլոմպոս, փոխանակ խօսքով պատասխանելու, առաւ հաւկիթ մը և հարցուց թէ ներկայ գտնուողներէն ո՞վ կրնար կանգնեցունել զայն քիթին վրայ: Անոնք բոլորն ալ, կայտառ նուրահասակ ազնուականներ և ծերունի եկեղեցականներ, փորձեցին բայց ոչ ոք

ԱՅՆՆԱՄԱՆԵՐ ՈՐ ԿԸ ՍՊԱՆՆԵՆ
ԲՈՅՈՒՄԱՆՈՐ ՕՁ ՄԸ

Կենդանեաց յաճախ ցուցած զարմանալի իմաստութիւնը կը բացատրուի այժեամբերուն (Յէյրան) մէկ ունակութեամբը: Այս կենդանիք կը բաժնուին զանազան տեսակներու որք իրարմէ կը տարբերին փոքր ի շատէ, բայց ամէնքն ալ ունին բարակ մարմին և գեղեցիկ կերպարան, կարճ ազի և թաթահերձ (ախլալ Բընուդալ) սաք, Տեսած ենք այժեամբերու երամակ մը որ կը ցատտոց վրայ, և չկայ աւելի շնորհալի տեսարան մը քան անոնց արագ շարժումները: Ամերիկայի մէկ մասին մէջ կը գտնուի տեսակ մը թունաւոր օձ որ

դառնայ: Այժեամբերը կը շարունակեն իրենց վազքը, մինչև որ անոնցմէ մին գտնէ առիթ յանկարծական ոտախնով մը կոխել իւր շորս սուր սմբակներով (Բընուդ) օձին գլխուն վրայ և ջախջախել զայն:

“ՀՈՍ ԵՄ”

Փաստաբան մը իւր պաշտօնարանին պատին վրայ կախած էր վանդակ մը, որուն մէջ կար սարեակ (սուրճեղ գոլու) մը: Փոքրիկ թռչնոյն սորվեցուցած էր պատասխանել երբ խօսէր անոր: Առաւօտ մը եկաւ Չարլի անուն աղայ մը: Փաստաբանը տղան հոն թողոց երբ քանի մը վայրկեանի համար երաւ դուրս: Երբ ետ դար-

ձաւ, թուշուրը չէր գտնուեր հոնս «Ո՛ր է թուշուրնս», հարցուց: Չարլի պատասխան տուաւ թէ բան մը չէր գտներ անոր վրայ: «Բայց», ըսաւ նա, «Չարլի, թուշուրը վանդակին մէջն էր երբ ես դուրս ելայ: Ըսէ, ի՞նչ եղաւ:» Չարլի ըսաւ թէ բան մը չէր գտներ թուշուրն վրայ, թէ վանդակին դուռը բաց էր, և կը կարծէր թէ թուշուրը թուած փախած էր: Փաստաբանը կանչեց բարձր ձայնով, «Սարեակ, ո՛ր ես:» Թուշուրը ուղղակի տղին դրպանէն խօսեցաւ և բաւական յստակ արտասանութեամբ ըսաւ, «Հոս եմ:» Ո՛հ, ի՞նչ ծուղակի մէջ բռնուեցաւ տղան: Նա գողցած էր թուշուրը, և ծածկած էր զայն, ինչպէս կը կարծէր, ապահով տեղ մը, և իւր այս յանցանքը ծածկելու համար խօսած էր երկու սուտ, և հիմա բուն իւր դրպանէն եկաւ ձայն մը որ կ'ընէր իւր գործած յանցանքին պատմութիւնը: Այնպիսի վկայութիւն էր այն, որում պիտի հաւատար բոլոր աշխարհ: Տղան բսբու բան մը չուէր: Թուշուրն էր կենդանի վկայ թէ Չարլի գող էր և ստախօս:

Մենք ամէնքս ալ չունինք սարեակ, բայց ունինք խիղճ մը — ոչ թէ մեր գրպանին մէջ, այլ՝ աւելի ապահով տեղ մը — մեր հոգւոյն մէջ. և այդ կ'ըսէ թէ մենք յանցաւոր ենք թէ անմեղ, ինչպէս որ թուշուրը պատասխան տուաւ երբ փաստաբանը խօսեցաւ անոր, նմանապէս երբ Աստուած կը խօսի, մեր խիղճերը կու տան պատասխան, և այնպիսի վկայութիւն՝ զոր չենք կարող ուրանալ կամ սալ տարբեր բացատրութիւն:



ԵՐԱՍՄՈՍ

Կը սկսինք Տղայոց Աւետարեբի մէջ գնել կարգ մը Հոլանտական պատկերներ. և նախ Հոլանտայի ամենէն համբաւաւոր ուսումնականաց միոյն, Երասմուսի, պատկերը: Երասմուս ծնաւ 1467 ին Ռոթերտամ քաղաքին մէջ, բայց իւր չափահասութեան տարիներուն միայն վո՛քը մասն անցուց Հոլանտայի մէջ: Երբ քսանհինգ տարեկան էր քահանայ ձեռնադրուեցաւ ի Գաղղիա, և յետոյ պարապեցաւ իւր ուսմանց թէ՛ ի Փարիզ և թէ՛ Անգղիոյ Օքսֆորտ և Գեմպրիճ քաղաքաց մէջ: Ի Գաղղիա և ի Հոլանտա քանի մը տարի ուսուցչութեան պաշտօն վարելէն ետքը, երկրորդ անգամ՝ գնաց Անգղիա և եղաւ Աստուածաբանութեան և Յու-

նարենի փրօֆէսոր Գեմպրիճի համալսարանին մէջ: Հոն ինը տարի անցունելէն ետքը գարձաւ ցամաքային Եւրոպա 1514 ին, հրաւիրուելով արքիւզուքս կարողութե որ յետոյ եղաւ կայսր կարլոս Ե: Իւր այս վեհափառ բարեկամէն կ'ընդունէր փոքր թուշակ մը որով կարող եղաւ նուիրել իւր կենաց մնացած մասը գրական աշխատութեանց: Իւր դարուն ընտելագոյն լեզուագէտն էր, և քաջահմուտ՝ գրութեան ամէն ճիւղերուն: Գրութեան ոճն էր յստակ և ճոխարան, և եթէ ուղէր, կարող էր երգիծաբանութեան զէնքը գործածել մեծագոյն ճարտարութեամբ: Իւր գլխաւոր գործն եղաւ վերստին կենդանացու-

Ի՛նչ էր ՁՈՐ ՁԵՐ ԿՐՆԱՐ ԸՆՆԷԼ Երբ Սթէնլի իւր օրերը կ'անցունէր Ափրիկէի խորերը, օր մը խեղճ բնիկ մը քաջկուտուելով բերուեցաւ անոր առջև, հրացանի մը գողութեան յանցանքով: Արդարեւ անոր կրած հրացանը երկրախոյզ խումբին կը վերաբերէր, և անարեկեալ սևամորթը չէր թուեր թէ կարող էր պարզ բացատրութիւն մը սալ թէ ի՛նչպէս ձեռք բերած է այդ հրացանը: Բայց սա պարզ խօսքը կ'ըսէր հաստատելու համար թէ ինք չէր գողցած զայն: «Ես Աստուծոյ մէկ որդին եմ», կ'աղաղակէր, «ես չեմ կրնար գողնալ:» Զայս կը կրկնէր շատ անգամ: Սթէնլի հաւատաց անոր և ազատ



ԵՐԱՍՄՈՍ

նել Սուրբ Գրոց ուսումն բնագիր լեզուներով: Յունարէն նոր կտակարանի առաջին հրատարակութիւնն ըրաւ Երասմուս 1516 ին: Ի մասին Բողոքական Բարեկարգութեան՝ ջանաց միջին ընթացք մը բռնել, որով իւր վրայ հրատիրեց երկու հակառակ կողմանց մոլեռանդներուն մեղադրանքը: Իրրեւհերետիկոս դատապարտեցաւ Սուրբ պոնի կաթոլիկ ժողովէն ի Փարիզ, և լուտեր, որ ի սկզբան էր անոր ջերմ բարեկամը և սքանչացողը, յետոյ մերժեց զնա: Երասմուս երբեք կատարելապէս չընդունեց կաթոլիկ եկեղեցին և ոչ երբեք յիովին միացաւ Բարեկարգչաց հետ: Մեռաւ ի Պազէլ յամին 1536, իւր բարեկանաց մէջ: Այս քաղաքի Բողոքականաց մայր եկեղեցոյն մէջ կը կանգնի անոր յիշատակարանը:


արձակեց, և ես սուաւ հրացանն անոր: Այնուհետեւ տեսնուեցաւ որ նոյն մարդը գտած էր կիրսուած հրացան մը, և խեղճ բնիկը խորհուրդ հարցնելով միտինարին, հրացանը բերաւ Սթէնլիի բանակը:

Բայց մեծ երկրախոյզին սիրաւ պատի չարժամ ինեւլ աստուածային շնորհաց զօրութեան այս սպացոյցին վրայ, որ այս վայրենին, որ մեծցած էր բոլոր այն անարգ, ցած և անհամեատ պարագաներէն շրջապատեալ, բարձրանայ և ըմբռնէ Աստուծոյ զուակի մը արժանապատուութիւնը, այնպէս որ ըսէ, «Ես չեմ կրնար գողնալ, վասն զի Աստուծոյ մէկ որդին եմ:»



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

Նուապեա Անարբալն իւր նոր հրատարակած գիրքին մէջ որ կը կոչուի



«փոթորիկը և Ծովապատակը» կը նկարագրէ սրտաշարժ դէպք մը, «աշխարհի ամենէն դիւցազնական գործերէն մին», ինչպէս կ'անուանէ զայն, որում հանդիսատես եղաւ Չինաստանի ծովեզերաց մտերը: Ինչո՞ւն անուն նաւը, որոյ մէջնա երրորդ պաշտօնակալ էր այն ժամանակը, դեռ նոր ազատուած էր Բոսնիայ կոչուած փոթորիկէն որ Հնդկաց Ովկիանոսին մէջ կը պատահի, և ահա երեցաւ կոյսերէ և առաջատաներէ զուրկ նաւ մը:

Նաւուն տախտակամածին վրայ կը տեսնուէին չորս անձինք, և մինչ ինչո՞ւն նաւաստիք կը դիտէին զայնս, տեսան որ այդ չորսէն մին նետուեցաւ ծով և կու գար դէպ ի ինչո՞ւն: Այս նաւուն նաւաստիք կայնած էին իրենց ձեռքը պատրաստ ունենալով ջրին երեսը պահող գործիներ և չուաններ, և անոնցմէ երկու, երեք անձինք իրենց մէջքը շուաններ փաթած պատրաստ կը կենային երթալ լսզացողին օգնելու, եթէ հարկ ինչէր: Բոլոր նաւաստիք յուզուած էին մեծագէտ: Ամէն շրթանց վրայ կար սահարցումը թէ «կարող պիտի ըլլայ հասնիլ մեզ»: «Կ'երևի թէ քաջ լուրորդ է նա», լսուեցաւ որ կ'ըսէր նաւաստիքը, «և իւր կռնակը բան մը կը կրէ»:

Մինչ մարդը կու գար դէպ ի ինչո՞ւն եռացող, փրփրացող անդունդին վրայ, երբեմն ալեաց դադարէր ելլելով, երբեմն անոնց ցած մասանց մէջ աներևութանալով, այն արիասիրտ նաւաստեաց երեսներն առած էին այն պիտի կերպարան մը զոր հնար չէ մոռնալ: Հեազհետէ մտեցաւ նա մինչև որ ծով նետուած գործիներուն մէկուն քով հասաւ: Բռնեց զայն ամուր մը, մի և նոյն ժամանակ պաղատաբան ակնարկ մը նետելով այն անձկուած ձեռաց վրայ որք աղնուաբար դէպ ի նաւ կը քաշէին շուանները:

Ինչո՞ւն կուշտին դպչելէ առաջ, իրենց ձեռքը և մէջքը շուաններ ունեցող երեք նաւաստիք նետուեցան ծով: Մէկ վոյրկենի մէջ այն քաջ մարդուն մէջքը կապուեցաւ շուան մը և նա շուտով առնուեցաւ նաւուն մէջ: Խնամով փաթթուած ծրարը որ կը գտնուէր իւր կռնակը, բացուեցաւ, և նաւաստիք հիացմամբ տեսան որ ահա անոր մէջ կար երկու, երեք տարեկան գեղեցիկ աղջիկ մը: Մանկիկը և իւր պահպանողը խկոյն առնուեցան նաւուն վարի յարկը, և երկուքն ալ շուտով արթնցան իրենց

թմրեալ վիճակէն նաւաստիքին խնամոյ ներքև: Այս միջոցին վտանգեալ նաւը ծովուն տակն իջած էր իւր բուր պարունակութեամբ:

Նաւաստիքը գիտեն թէ ինչ է վտանգը, և կարող են հասկնալ դիւցազնական գործոյ մը արժէքը: Հազիւ թէ մարդը և մանկիկը նաւն առնուեցան ապահովութեամբ, ինչո՞ւն նաւաստիք սկսան սեղմել իրարու ձեռք, իբր թէ անձամբ իրենք գտնուած էին վտանգի մէջ և ազատուած էին անկէ: «Իբրու որ սքանչելի մարդ է», կ'ըսէր մին: «Բարեբաստիկ և երկար կեանք իրեն», կ'ըսէր ուրիշ մը, մինչ այլք հազիւ կրնային զպել իրենց սաստիկ յուզումը իրենց երեսները մէկ կողմ գործուցած:

Այս պատմութեան դիւցազնը, մարդկային ազգին մէկ ազնիւ ներկայացուցիչը, էր սեւամորթ մը ծնեալ Ամերիկայի Վիրժինիա նահանգին մէջ, իւր մանկութեան և պատանեկութեան տարիներուն մէջ գերի էր: «Մատաբակոյ նա էր յոյժ փափուկ զգացմանց տէր անձ մը», կ'ըսէ Մ. Ա. Արթուրը, «և կը սիրէր և կը յարգէր իւր վախճանեալ նաւաստիքը և անոր կիներ, ասով յայտնի էր որ այնքան խնամք և հոգածութիւն ցուցուց անոնց որբացեալ մանկան»: Անոր առնուն էր Տանիել ճաքսըն: Արդարև յիշատակութեան արժանի:

ՏՈՒՆ ԻՐԵՆՑ ԼՈՒՄԱՆԵՐԸ

Անցեալ փետրուար ամսուն այնքան մեծ փափաք և եռանդ ունեցան Միացեալ Նահանգաց Ֆրանսէլֆիա քաղաքի և արուարձան քաղաքաց բնակիչք, լցունելու համար ինչո՞ւն շուաններու ուսեաներով Ռուսիոյ սովետալ բնակչաց համար, որ դպրոցներուն տղայք խումբեր կազմեցին շահելու համար քանի մը փարա որպէս զի տային այդ նպատակին համար: Նուիրատուութիւն հաւաքողներէն մին ըրած է սրտաշարժ պատմութիւն մը երկու փոքրիկ խառնածին (Գեշ) աղջկանց որք բերին վաթսուն սէնթ (իբր տասն և հինգ դահեկան) որ իրենց խնայութեան մտտուկին տոբոլջ պարունակութիւնն էր: «Մենք կ'աղէինք», ըսաւ մեծ աղջիկը, «դարնան զլխարկ գնել, բայց քարոզիչն ըսաւ թէ այն տղաքը մենէ աւելի աղքատ են և աւելի թշուառ, և անօթի են: Ես ալ երբեմն անօթի եղած եմ»:

Նաւը դիմաւորեցին յուզեալ բազմութիւն մը Ռուսաստանի Լիպաւ քաղաքին նաւահանգստին մէջ: Անոնք առին Նաւաստիք Սարճէնթը, բարձրացուցին օդին մէջ և անցուցին իրենց զբոսներուն վրայէն: ամբողջ կը շանար հումբուրել անոր ձեռուները և հանդերձները: Անոր բարի գալուստ մտղթել եկան պառուներէն հազարաւոր գործաւորաց և զիւզացոյ պատգամաւորներ, և ըսելէ ետքը թէ այդ ընդունուած ուսեաներով պիտի ազատուէր քառասուն հազար անձանց կեանքը, զրկեցին «իրեն սէրն և բարենները այն հեռաբնակ ժողովրդեան որ իրենց վրայ մտածած էին դառն կարօտութեան ժամանակ»:

Մովեալ ժողովրդեան նուէրները կրող կառախումբին տրուեցաւ իրաւունք, բաց ի արքունի թղթաար կառախումբէն, բոլոր միւսներէն առաջ ճամբայ ելլելու: Ռուսաստան շուտով բաժնուեցաւ ամենէն կարօտ և զոռներուն: Մասնախումբին անգամ ներէն մին իւր մէկ նամակին մէջ կ'ըսէ թէ շատ կիներ իրենց անօթութենէ գեղնած և նիհարացած տղայոց հետ կու գային խնդրել ուսեաս որ պիտի ազատէր իրենց կեանքը:

Այս սովատանջ մանուկները այն սառուցեալ Ռուսիոյ մէջ հիմա բան մը չեն գիտեր այդ խառնածին մանկանց վրայով որք իրենց անձն ուրացան անոնց հաց զրկելու համար: Եւ սակայն միթէ իրաւացի չէ՞ յուսալ թէ պիտի գայ ժամանակ երբ երկինց մէջ պիտի հանդիպինք այնպիսի բարեկամներու որք այս աշխարհին մէջ, առանց մեր դիրենք ճանչնալուն, օղնած են մեզ հոս իրենց ազնիւ խօսքերով կամ մարդասիրական գործերով: Աստուծոյ որդիքը պիտի չըլլան իրարու օտարական իրենց Հօր տան մէջ:

Ամերիկայի Սոցիալական Դեմոկրատիկ Մասնակցական Կուսակցութեան կողմէն, Տնօրէն Կարոպետ Զ. Ս. ՊԱՐՆԸՄ, Ֆինանսական Կոմիտէի Բ. Արեթան Խան



ԿՈՑԻԱԿԱՆ ԴԵՄՈՔՐԱՏԻԿԱՆ ԿՈՍՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՍՐ ՊՅՅԱՆՅԱՆ